

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՂԵՒՈՆԴ ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

«ԳԻՒՂԱՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆԸ» № 1



ԻՆՉՊԵՍ

ԲԱՄԲԱԿԸ

ՄՇԱԿԵԼ

(Նկարներով)

ՅՈՂՀ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

Էլեկտրատպ. օր. Ն. Աղանեան Պոլից. 7.

1912

633

7-50

18 JUL 2013

18500

630
7-50

24 SEP 2010

8

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՂԵՒՈՂԻ ՅԱԿՈՎԵԱՆԻ

«ԳԻՒՂԱՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆԸ» № 1

630
104-ԱԵ

ԻՆՉՊԵՍ ՄՇԱԿԵԼ

ԲԵՄԲԵԿԸ

(4 նկարով)



ՅՈՎՀ. ՊԵՏՐՈՍԵԱՆ



ԹԻՖԼԻՍ

Էլիսաբետպ. օր. Ն. Աղանեանցի, պոլիգ. 7.
1912

1003
10785

033
ՅԺ-101

Բամբակագործութիւնը Գիւղատնտեսական
ամենաշահաւէտ պարապմունքներից մէկն է հա-
մարում:

Բամբակագործութեամբ կարելի է պարա-
պել Անդրկովկասի համարեա բոլոր հարթութիւն-
ների վրայ, որոնք ծովի մակերևոյթից 3—4000
տանաչափ բարձրութիւն ունեն, որոնք յաճախա-
կի անձրևների ենթակայ չեն, որոնց վրայ ա-
շունը արտաբնական շուտ չէ սկսւում իր անձ-
րևային, ցուրտ և մառախլապատ եղանակներով,
կամ առնւայն արակ, որոնց վրայ լաւ հասունանում
է խաղողը:

Եթէ բամբակագործութեամբ լրջօրէն պա-
րապել ցանկացողը ուզում է, որ իւր ժամանակն
ու եռանդը, դրամագլուխն ու շահը, աշխա-
տանքն ու ծախքերը իզուր չկորչեն, վարձա-
տրուեն ինչպէս հարկն է, պէտք է աշխատի ա-
մեն կերպ բոլոր պայմանները—հնարաւորութեան
սահմաններում—յարմարացնել բամբակի բոյսին
և գործի կապրիկներին ու մշակման:

1. ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

Բամբակ ցանելու համար պէտք է ընտրել
այնպիսի տեղեր, որոնք շատ քարքարոտ, ճահ-
ճային, զառիվայր—եամաջներ չլինեն. բամբակի

արտերը պէտք է լինեն հարթ—միայն միջին մասերը փոս չընկած—հողեր. կամ արտեր, որոնք փոքր թեքւածք ունենան դէպի հարաւ, հարաւ-արեւելք կամ հարաւ-արեւմուտք: Այդպիսի թեքւածքներ ունեցող արտերը ամենանպաստաւոր պայմանների տակ են լինում. բամբակի համար դրանք մեծ հեշտութեամբ և շատ կանոնաւոր են ջրում. աւելացած ջրերը—որոնք արտից դուրս պիտի գնան—չեն հաւաքւում ու կուտակւում, լճանում—գետնում արտի միջի փոսերում. այդպիսի արտերի հողերը տաք են լինում, փուխը, չորաւուն և ազատ զանազան խոտաբոյսերից՝ ալադներից: Այդ տեսակ արտերի վրայ բամբակի մշակութիւնը անհամեմատ աւելի արժան է նստում և յաջող բերք է տալիս՝ քան բոլորովին հարթ կամ դէպի հիւսիս թեքւածք ունեցող արտերի վրայ:

2. ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄՆ—ՈՅԺ ՏԱԼԸ.

Բամբակի համար արտերը որոշելուց կամ ընտրելուց յետոյ—եթէ հողը ուրիշ ցանքսի տակ է եղել, կամ ուժից ընկած—բէզարած հող է,—պէտք է ամենից առաջ մտածել այդ ուժից ընկած հողը ոտքի կանգնեցնելու, պէտք է նոր նիւթերով—արհեստականօրէն պարարտացնել—ոյժ—ղւաթ տալ հողին:

Հողը պարարտացնելու-ոյժ տալու համար՝ պէտք է գոմում, աղբանոցում եղած անպսունների աղբը—փէյինը (անհրաժեշտ է, որ աղբը լինի հինը—ոչ պակաս քան մի տարուայ), մոխիրը, ծերտը փթած, բանջարեղէնները, շերամի որդնի աղբը, տան զիբիլը, շորի, լաթի, դարմանի, տերկների և այլն կտորտանքները հաւաքել, կրել արտը և համահաւասար շաղ տալ արտի մէջ. կան և արհեստական պարարտանիւթեր, որոնք աւելի շատ ոյժ են տալիս հողին՝ քան մեր թւած հազար ու մի զիբիլներն ու կտորտանքները, բայց քանի որ դեռ մեր գիւղացիները երկրագործները շատ տեղերում տանը եղած զիբիլը, գոմի աղբը նոյն իսկ ծովանում են—կամ սովորութիւն չեն արել—արտը տանելու—հէր մնաց թէ փող տան, պարարտանիւթ առնեն հողին ոյժ տալու համար,—դրա համար էլ մենք առ այժմ աւելորդ ենք համարում այդ նիւթերի և դրանց գործածութեան մասին մանրամասն խօսելը. միայն ցանկացողները, եթէ ուզենան, կարող են փորձի համար մի փոքրիկ տարածութիւն պարարտացնելու համար գործ ածել ֆօսֆօրային թթւում և ալգոտային բաղադրութիւն պարունակող նիւթեր՝ համոզւելու համար, թէ որքան մեծ նշանակութիւն ունի արհեստական պարարտանիւթը յաջող և լուստ բերք ստանալու համար:

3. ՀՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Փէյինը կամ աղբը արտի վրայ շաղ տալուց յետոյ Սեպտեմբերին—երբ եկած անձրևներից հողը կակղած կլինի—պէտք է արտը անպայման մի երես գութանով կամ երկու երես չուժով վարել—նախապատրաստել—որքան կարելի է խորը (մի գութանի վարը հաւասար է երկու անգամ չուժով վարելուն)։ Եթէ չուժով վարելիս առաջին անգամ արտը վարում են արևելքից արևմուտք՝ երկրորդ վարը պէտք է անել հիւսիսից հարաւ, այսինքն խաչաձև—խաչմերուկ։

Աշնանավարը բամբակի ցելն է, և վստահօրէն կարելի է ասել, որ բամբակագործը գործի յաջողութեան կէսը վաստակում է աշնանավարի ժամանակ։ Թէ ինչ առաւելութիւն կամ աչքի ընկնող նշանակութիւն ունի այդ ցելը—աշնանավարը՝ արդէն հասկանալի պիտի լինի ամեն մի երկրագործի համար, դրա համար էլ կարիք չկայ թելելու աշնանավարի առաւելութիւնները։

Աշնանավարը վերջացնելուց յետոյ պէտք է նախապատրաստութիւն տեսնել գարունըւայ աշխատանքների համար։ Դեռ գարունը չբացւած, երբ նոր-նոր հողը սկսում է բացւել իր սառած դրութիւնից, առաջին յարմարութեան պէտք է մտնել բամբակի համար ցելած արտը։ Այս ան-

գամ էլ պէտք է մի երես գութանով կամ չուժով հողը լաւ չուռ ու պարան անել, հաւաքել հողի երեսից—միջից արմատները, փայտի, չիր ու չոփի, ցաքի կտորները—կրակ տալ այրել, և սպասել Ապրիլ ամսուայ գալստեան։

4. ՍԵՐՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Առհասարակ, ինչպէս ընդունւած է կեանքում, մարդիկ միշտ աշխատում են ամեն բանի լաւ տեսակը ձեռք բերել, այնպէս էլ պէտք է գիւղատնտեսութեամբ պարապող գիւղատնտեսները, սիրողները և մեր գիւղացի երկրագործ աշխատաւորները ամեն կերպ աշխատեն լաւ, ընդիր սերմեր ձեռք բերել թէ շերամի, թէ ցորենի, գարու, խոտաբոյսերի, բանջարեղէնների, ծառապտուղների, նոյնպէս և բամբակի։

Բամբակագործը նախօրօք պէտք է բամբակի սերմի պատրաստութիւնը—թաղարեաքը տեսած—վերջացրած լինի։ Լաւ, խելացի գիւղացի բամբակագործը չպէտք է հօր-էգուց զցելով սերմը թողնի գարունըւայ բազարին առնելու—եթէ ինքը տանու լաւ սերմ չունի։

Բամբակի ամենալաւ սերմը համարւում է այն սերմը, որ հաւաքւում է հէնց իր՝ բամբակագործի արտից—եթէ միայն սկզբից լաւ սերմ է ցանած եղել,—որովհետև այդ սերմը և տե-

դական է, և սովոր է նոյն հողին ու ջրին, օգին ու կլիմային, մի խօսքով այն բոլոր պայմաններին, որոնց մէջ ինքը՝ այդ սերմը ծլել, գարգացել, աճել և հասունացել է։ Իսկ եթէ բամբակագործը տանու սերմ չունի, նա պէտք է վաղօրօք աշխատի լաւ սերմը գնել։ Լաւ համարոււմ են այն սերմերը, 1. որոնք փուտ չեն, ցրտատար չեն եղել, չեն թորշոմել, 2. որոնք շատ խոշոր չեն, 3. որոնց դրսի պատեանը ծածկւած է կանաչ աղւամագերով, 4. որոնց եթէ միջից կիսենք, միջուկը սպիտակ է, վրան հազիւ նշմարող ասեղի ծայրի չափ սև պոտերով, 5. որոնք համեմատաբար ծանր են և լիքը, 6. որ շուտ են հասունանում, չեն մնում մինչև անձրևների, ցրտերի սկսելը հոկտ. նոյեմբեր ամիսները, և վերջապէս 7, որոնց բամբակը—դօզան փարթամ է, մեծ, և տալիս է աւելի մեծ տոկոս մազ (ВОЛОКНО)։

(Եթէ սերմերը լինում են սև գոյնի կամ տկուր, կամ եթէ նրանց միջուկը լինում է գորշ կամ սևաւուն գոյնի, այդպիսի սերմերը միանգամայն անպէտք են համարւում մեր կլիմաների համար։ Խոշոր սերմերից էլ պէտք է խուսափել, որովհետև դրանք ուշ են հասունանում և համեմատաբար էլ քիչ բամբակ են տալիս)։

Այդպիսի լաւ յատկութիւններ ունեցող սերմ այժմ Անդրկովկասում յայտնի է «կինգ» կոչւած

տեսակը, որ գերազանցում է մեր տեղական բոլոր սերմերին և սովորաբար բոլոր սերմերից 10—15 օր շուտ է հասունանում։

Սերմը գնելիս պէտք է աշխատել չխաբել, որովհետև հիմա արդէն մեզ մօտ սովորութիւն է դառել, ամեն մարդ իր ապրանքը նադեղու համար աշխատում է հաւատացնել, որ իր սերմը մաքուր «կինգ» է, և նոյնիսկ 2—3 տարի է, ինչ ինքը այդ սերմը բերել է տւել Ամերիկայից։ Ահա այդ տգեղ սովորութեան քնասակար հետեանքներից ազատելու համար պէտք է դիմել վստահելի հիմնարկութիւնների կամ բարեխիղճ բամբակագործների և նրանց միջոցով ստանալ հարկաւոր քանակի սերմը։

5. ԱՐԱԹ ԱՆԷԼԸ ԵՒ ՍԵՐՄԸ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ։

Երբ արտը վարած պատրաստ է, հունդը—սերմը պատրաստ է, մնում է մի վերջին աշխատանք ևս, որից յետոյ պէտք է սկսել սերմը ցանելը։

Որպէսզի բամբակի սերմը շուտով ծլի, և այդ ծլն էլ չմնայ հողի տակ հողի երեսի կոշտացած—աղաղացած լինելուց, կամ քեասագի—կոշտ հողազնդի ծանրութեան տակ կամ որպէսզի բամբակը իր առաջին շրջանները նպաստաւոր պայմաններով անցկացնի, որ դեռ աշխա-

նային անձրևներն ու ցրտերը չընկած հասու-
նանայ ու բացւի՝—անհրաժեշտ է հնար եղածին
չափ հէնց սկզբից օգնութեան հասնել բամբակի
սերմին և չորածիլ տունկին: Ահա թէ ինչու մն
է կայանում այդ օգնութիւնը:

Սերմը գցելուց մի քանի օր անաջ պէտք է
արտը ջրել և թողնել, որ մի քիչ չորանայ: այն-
քան որ արտը ցէխ չլինի, տաւարի կամ մար-
դու ոտը չխրուի հողի մէջ. պէտք է չութով
շատ երես արտը նորից շուռ ու պարան անել
փխրացնել, ցաքանով ամբողջ արտը ցաքանել,
դար ու փոս տեղերը հաւասարացնել և ապա
սկսել սերմը ցանել: Այդ ձևի պատրաստութիւ-
նը կոչւում է «արաթ» անել: Նախ քան սերմը
գցելը անհրաժեշտ է սերմն էլ թրջել գոլ ջրի
մէջ, թողնել մի օր ու գիշեր մնայ ջրի մէջ, հե-
տեւալ օրը վերցնել թրջւած սերմը խառնել
մոխրի կամ աւաղի հետ, մի լաւ տրորել—խառ-
նել և ապա վերցնել մոխրախառն սերմը թիա-
կով խփել պատին: Այդ գործողութիւնը արւում
է, որ սերմի վրայի մազ—թելիկները կծկւեն,
բաժանւեն հունդից կամ հունդերը իրարից, որ
սերմելիս հունդերը—սերմերը կունդ—կունդ չը
թափւեն: Սերմի թրջելու առաւելութիւնը կա-
յանում է նրանում, որ նրա միջուկը խոնաւա-
նալով՝ նախապատրաստւում է աւելի շուտ ծի-

լու, որով և մի քանի օր բոյսի երկան գալը
հարաւալա՞ն է դառնում (առաջ է ընկնում):

6. ՍԵՐՄԸ ԳԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ.

Սերմը ցանելու ժամանակը ճշտօրէն որոշել
անկարելի է բայց ընդունւած է սովորական ե-
ղանակներին սերմը ցանել Ապրիլի 5—15—20-ը:

Եթէ զարուհը շուտ է սկսել և վատ նա-
խանշաններ, եղանակի խիստ փոփոխութիւններ
չեն նկատուում կարելի է սերմել և Մարտի 25-ից
սկսած: Ապրիլի 30-ից յետոյ գցած սերմերը
համարւում են «հարազան» (ուշացած ցանք),
պատահում է, որ սերմում են և Մայիս ամ-
սում, բայց այդ ցանքը չի կարելի կանոնաւոր
համարել, որովհետեւ անտարակոյս է, որ այդ
ցանքների արդիւնքը անհամեմատ աւելի քիչ
կլինի, քան սովորական—հարաւալ ցանած ար-
տերինը:

Ուրեմն բամբակի ցանքսի սովորական ժա-
մանակը պէտք է համարել Ապրիլը, ամենաշուտը
Մարտի վերջին 3—4 օրերը, իսկ ամենաուշը
Մայիսի 5—10-ը, որ այնքան էլ ցանկալի չէ:

7. ԲԱՄԲԱԿԻ ՍԵՐՄԻ ԶԱՆԳՍԸ.

Բամբակի սերմը կարելի է ցանել շաղա-

ցանք—ինչպէս ցորենը, գարին, սիսեռը, լոբին և այլն, մեքենայով շարքացան և կարելի է ձեռքով շարքերով տնկել—ցանել:

Ձեռքով շաղ տալով ցանելու համար—ինչպէս մինչև օրս էլ ցանում են Անդրկովկասում—մի դեսեատին տարածութեան (օրավար ու կէս, երկու բեռան տեղ, 2400 քառակուսի սաժէն) վրայ պէտք է ցանել 8—10 փութ սերմ: շարքացան մեքենայով՝ 2—3 փութ, իսկ ձեռքով տնկելով՝ հազիւ մէկ փութ:

Որովհետև շաղացանք ձեր արդէն յայտնի է բոլորին, դրա համար էլ աւելորդ ենք համարում նկարագրել այդպէս ցանելու ձևը: միայն աւելորդ չենք համարում յիշեցնել և առաջարկել, որ լաւ հողերում—ինչպէս էլ որ կուգէ լինի—ամեն կերպ պէտք է աշխատել նոսր—սէյրազ ցանել սերմը:

Որովհետև շաղացանքը հնարաւորութիւն չի տալիս մինչև վերջ լաւ մշակելու բամբակի բոյսը, հետևելու նրա զարգացման, փխրացնելուն, քաղահանելուն, գլուխները տալուն, կանոնաւոր ջրելուն և այլն, որովհետև շաղացանքի մշակութիւնը անհամեմատ աւելի թանգ է նստում, քան միւս ձևի ցանքսերինը, դրա համար էլ խորհուրդ ենք տալիս թողնել մինչև օրս շարունակող ցանելու այդ ձևը և անցնել շարքացան ձևերին:

Շարքացանը այն առաւելութիւնը ունի, որ մի դեսեատինից 4—5 փութ սերմի խնայողութիւն է անում, որ բամբակի բոյսերը շատ աւելի լաւ և շուտ են զարգանում. որ արեգակը համահաւասար և լաւ է տաքացնում. որ ջրելիս աւելի դիւրին և կանոնաւոր է ջրում. որ փխրացնելիս, ալաղը տալիս, բամբակի գլուխները տալիս, բացւած բամբակները հաւաքելիս աւելի մեծ յարմարութիւններ է տալիս, քան եթէ ցանւած է լինում շաղացանք:


Ճիշտ է ձեռքով շաղտուած ցանքսը էժան է նստում, բայց միւս բոլոր գործողութիւնները, աշխատանքները—բուկը տալը, ջրելը, քաղհանելը, փխրացնելը, գլուխները տալը և այլն և այլն շատ աւելի թանգ են նստում քան շարքացանի նոյն աշխատանքները:

Երբ արտը վարած պատրաստած է, անհրաժեշտ է, որ նախ ցաքանով և ապա տափանով շարդուին, փշրուին արտի մէջ եղած բոլոր կոշտերը—քեասագները. անհրաժեշտ է լաւ հարթել, հաւասարացնել արտի երեսը և ապա ձեռնարկել շարքացան գործողութեան: (Տես նկար 1).

Շարքացան մեքենան նախ քան գործի դրելը պէտք է լաւ իւղել, բոլոր մասերը կանոնաւոր պնդացնել, կարգի դրել թէ սերմը քանի քանի պիտի վայր ձգի հողի մէջ. կողքի շղթան կանոնաւորել, նայած իրարից 6 վերջուկ հեռա-

ւորութեամբ պիտի սերմերը գցել, թէ 8 վերշոկ հեռավորութեամբ: Այդ բոլոր նախապատրաստութիւնները տեսնելուց յետոյ, մեքենայի

Նկար 1. Շարժացան մեքենայ բամբակ, սիսեռ, եղիպուցորեն և այլն ցանկեր համար:



փայտի շրջանակի վրայ հազցնել նախապատրաստած $\frac{3}{4}$ —1—1 $\frac{1}{4}$ —1 $\frac{1}{2}$ արշ. երկարութեամբ նշանակուս գծող երկաթէ մի ատամանի մար-

կեօր, մէկը աջ կողմից, մէկն էլ ձախ կողմից: Եւ ահա մեքենան պատրաստ է բոլորովին:

Փոխել, լաւ տափանած արտի աջ կողմում կանգնեցնում են մեքենան, արկղը լցնում բամբակի սերմով և ապա մի ձի, կամ էշ, կամ ջորի լծած ուղիղ գծով մեքենան առաջ է գնում արտի մի ծայրից դէպի միւս ծայրը: Նշանակուս գծող մարկեօրը ձախ կողմից ուղած հեռավորութեան վրայ նշան է գծում, որ արտի միւս ծայրից վերադառնալիս մեքենան իր ցանող մասով ուղիղ այդ գծի վրայով անցնի: Մեքենան բանեղիս նրա առաջի խոփը փոքրիկ աղոս է վերցնում. սերմնաթափիչ պտուտակը 3, 4, 5, 6-ական սերմեր ձգում է աղոսի մէջ (նայած սերմի լաւութեան), ապա 4—6—8 վերշոկ անցնում դատարկ, նորից սերմը գցում: Սերմնաթափիչ պտուտակի յետին մասին, փայտէ շրջանակի վրայ, աջ և ձախ կողմից յարմարեցրած են 2 երկաթէ կեռ թիակներ, որոնք հողով լցնում, ծածկում են աղոսը—սերմերը, իսկ զրանց յետեից երկաթէ զլանաձև տափանը հարթելով անցնում է աղոսի վրայով և կանոնաւորում ցանւած աղոսը:

Մեքենան, երբ հասնում է արտի միւս ծայրը, պէտք է զգուշութեամբ մի քիչ յետ տալ և ապա դարձնել դէպի ձախ (դէպի աջ երբէք չը պէտք է մեքենան բանեցնել, որովհետեւ շուտով

կփշանայ) նոր գծած նշանակոսով առաջ գնալ, որի ժամանակ նշանակոս գծող մարկեօրը նորից նշան է գծում, միայն այս վերադարձին աջ կողմից, և այսպէս շարունակաբար ցանել սերմը, ի հարկէ, երբեմն-երբեմն կանգնեցնելով մեքենան մաքրել ցելից, բամբակի հաւաքւած կուտակւած թելիկներից (արկղի մէջ պտտող ճնշող մատները վրայից), նորից սերմ լցնել արկղը և այլն:

Սերմը ցանելիս պէտք է աշխատել շարքերը որքան կարելի է ուղիղ և կանոնաւոր անել, որպէս զի յետագայ աշխատանքները շարքերի արանքով դժուարութիւնների չհանդիպեն շարքերի շատ նեղ կամ շատ լայն լինելու պատճառով:

Այս ձևով ցանած արտը սերմելուց անմիջապէս յետոյ այլևս հարկաւոր չէ ջրել, որովհետեւ սերմը ինքը խոնաւութիւն հունի իր մէջ (թրջւած էր ջրում)․ արտը արդէն բաւական խոնաւ է (մի քանի օր առաջ ջրել ենք)․ սերմի ծիւերը առանց որ և է դժւարութեան կարող են երես դուրս գալ, որովհետեւ չկայ ոչ մի արգելք, որ դժւարացնի նրա երես դուրս գալը—հողի երեսի շերտն է, որ փութը է և կոշտացած ու պնդացած չէ:

Բամբակի շարքացան մեքենան—որ արժէ

40—45 ր.—մի ձիով և 2—3 մշակով կարող է օրեկան ցանել 2 դեսետաւին:

8. ԲԱՄԲԱԿԻ ՆՈՐ ՁԵՒԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆ.

Կայ և մի այլ շատ յարմար, չափից դուրս առատ բերք տուող և բոյսի աճեցողութեան շրջանում քիչ աշխատանք պահանջող ցանելու մի ձև, որից օգուտւում են համարեա թէ շատ քիչ խելացի և հմուտ բամբակագործներ միայն:

Այդ ձևը աւելորդ չենք համարում առաջարկել իբրեւ ամենանպատակալարմար միջոց բամբակագործութեամբ պարապողների համար—փոքրիկ տարածութիւնների վրայ: Պէտք է աշխատել ընդհանրացնել այդ ձևը, աւելի կատարելագործել, աշխատանքը հեշտացնել, մանաւանդ այն տեղերի համար, որոնք սակաւաջուր են, որոնց ալաղը—աւելորդ խոտաբոյսերը—շատ է և հողը պինդ:

Նրբ արտը վարած պատրաստած է, դարնան սկզբներին, սերմը ցանելուց մի քանի օր առաջ, պէտք է մարկոսով կամ քարդուվարով բոստանի առուների նման առուներ պատրաստել, միայն հետեւեալ տարբերութեամբ: Առուները չպէտք է լինեն շատ խորը և փոքրիկ-փոքրիկ, այլ ընդհակառակը շատ երկար, մօտ 10—15 արշ. երկարութեան, 1—2 արշ. լայնութեան, 2

1003
38707



թումբը պիտի ունենայ $\frac{3}{4}$ —1—1 $\frac{1}{4}$ արշ. լայնութիւն: Թմբի բարձրութիւնը առւի խորքից պիտի լինի մօտ 8—10 վերշոկ, բայց ոչ աւելի քան 12 վերշոկ: Այդպիսով ուրեմն ամբողջ արտը վերածւած կլինի զուգահեռական առունների, որոնք—եթէ արտի դիրքը կանոնաւոր հարթ է—ցանկալի է, որ ընկած լինեն հիւսիսից՝ հարաւ, հարաւ-արեւմուտք կամ հարաւ-արեւելք:

Ահա այդ ձևով պատրաստւած առունների 2 լանջերին էլ (դօշերին) առւի խորքից 5—6 վերշոկ բարձր պէտք է 3—3 կամ 4—4 տնկել բամբակի սերմերը: Տնկելուց յետոյ ջուր կապել ջրել առունները, միայն այնպէս, որ ջուրը չբարձրանայ մինչև սերման տեղը:

Այս ձևի ցանքսը թէև սկզբում մեծ դժւարութիւնների հետ է կապւած, առուններ կապելը, բուն-բուն տնկելը և այլն, բայց միւս կողմից անհամեմատ մեծ առաւելութիւններ ունի միւս ձևի ցանքսերի դիմաց:

Առաջին ջուրը տալուց յետոյ միայն մէկ անգամ կարիք կլինի ձեռքով քաղհանելու աւելորդ խոտաբոյսերը. իսկ հետեւեալ քաղհանները պէտք է միայն առւի մէջ անել, այն էլ ոչ աւել քան մի անգամ, որը կարելի է փոխարինել վարը դնելով կամ ձեռքի քաղհանող մեքենայի գործողութեամբ (ручной пропашникъ — попольникъ):

Այս ձևի մշակութիւնը հետեւեալ առաւելութիւններն ունի.—

1. Քիչ անգամ պէտք է ջրել. 2. Քաղհանելու կամ փխրացնելու այնքան կարիք չկայ, մանաւանդ փխրացնելու—եթէ միայն ջրելիս ջրակոխ չի եղել. 3. Արեգակի տաքութիւնը աւելի է ազդում բոյսի աճեցողութեան և զարգանալու վրայ. 4. Աւելի շուտ են սկսում բացւել բամբակի կնգուղները. 5. Հողը—արտը միշտ պարարտացման մէջ է, և 6. բերքը անհամեմատ առատ է լինում:

9. ՆՍՐԱՑՆԵԼ—ՍԷՅՐԱԳԱՏՆԵԼ.

Սերմը ցանելուց 10—15 օր յետոյ բամբակի բոյսը սկսում է երես դուրս գալ. Երբ արդէն ամբողջ արտը ծածկւած է բամբակի բոյսի նորածիլ կանաչ երկտերե թփերով 8—10 օրից յետոյ անմիջապէս պէտք է սկսել նոսրացնել—սէյրագացնել բամբակի բոյսերի թիւը: Ամեն մի օջախից կամ բնից կանաչած բամբակի բոյսերից թողնել երկուսը, այն էլ ամենալաւը, զլարթը, իսկ մնացածները յառանց այլևայլութեան հանել և դէն գցել:

Նոսրացնելը շատ մեծ նշանակութիւն ունի բամբակի լաւ զարգացման և առատ բերք տալուն համար, որովհետև մի դեսեատիւնի մէջ

պարունակող ոյժը աւելի շուտ լաւ կգարգացնի, կհասունացնի և առատ բերքի կբերի 10 հազար բամբակի բոյսի, քան՝ եթէ այդ քանակութեան փոխարէն նոյն տարածութեան վրայ լինէր 20—25 հազար բոյս:

10. ՔԱՂԱՆԸ—ԱՆԱՂԸ ՏԱԼԸ ԵՒ ՓԽՐԱՑՆԵԼԸ.

Բամբակի արտը իբրեւ պարարտացւած ուժեղ մի հող, տարակոյս չկայ, որ իր վրայ ունենալու է այլ և այլ տեսակի խոտաբոյսեր, որոնք իրենց ներկայութեամբ միշտ կարող են խանգարել բամբակի կանոնաւոր զարգացման, և նոյնիսկ յաճախ, եթէ այդպիսի խոտաբոյսերի թիւը շատ է լինում և շուտ զարգացող ու պալառաւոր (օրինակ չիմ խոտը, վայրի սօրգօն—քեալէշ—դանդուղդանը և այլն), կարող են խեղդել բամբակին, միանգամայն դադարացնելով նորածիլ բամբակի աճեցողութիւնը:

Ահա այդպիսի խոտաբոյսերից ազատելու և նոր՝ դեռ ևս անգոր տունկերին օգնած լինելու համար պէտք է դիմել քաղհան գործողութեան—ալաղը տալուն և փխրացնելուն—բողազները բօշացնելուն:

Քաղհանը բամբակի հողին է: Բոյսերի արանքներում եղած աւելորդ խոտաբոյսերի հեռացնելը, բամբակի բոյսի բողազը կամ շուրջը

փխրացնելը այնպիսի անհրաժեշտ գործողութիւններ են, որոնց ոչ մի բան չի կարող փոխարինել բամբակագործութեան մէջ: Բամբակագործը պէտք է համոզւած լինի, որ գործի ամբողջ յաջողութիւնը կախւած է արտը լաւ քաղհանելուց և փխրացնելուց:


Քաղհանելով՝ հողի այն ոյժը, որ ստանում են աւելորդ խոտաբոյսերը, այլևս չեն ստանալ և այդ ուժերը կմնան բամբակի բոյսերին: Քաղհանելու առաւելութիւններից մէկն էլ այն է, որ օդն ու լոյսը առատօրէն մուտք են գործում հողի մէջ, որով համ բոյսի աճեցողութիւնն է յառաջանում, համ էլ հողի միջի խոնաւութիւնը չի գոլորշիանում, իսկ այդ բոլորը մեծ ազդեցութիւն են ունենում բամբակի լաւ զարգանալու, շուտ հասունանալու և լաւ բացւելուն վրայ: Քաղհանելիս պէտք է արտում եղած բոլոր խոտաբոյսերը արմատախիլ անել, պէտք է $\frac{1}{2}$ —1 վերշոկ խորութեամբ փխրացնել բամբակների չորս ու բոլորը, բողազները տալ—բոշացնել և աշխատել մի թիզատեղ հող անգամ չթողնել առանց քաղհանելու:

Երեք անգամ լաւ, կանոնաւոր քաղհանելով փխրացնելով կարելի է բամբակին ազատել երկու անգամ ջրելուց: Բամբակագործութեան ամենածանր և ամենաթանգ աշխատանքը քաղհանելն է, որի համար և մարդիկ մտածել և գտել

են դիւրին միջոցներ, բայց որոնցից դժբախտաբար դեռ մենք չենք վարժւել օգտւել: Ձեռքի ուրագներով և թոխներով մի անգամ բարեխիղճ քաղհանելու և փխրացնելու համար մի դեսեստին տարածութեան հարկաւոր է 20—30 բանւոր. սովորաբար բամբակը պէտք է քաղհանել 3—4 անգամ, որից 2 անգամւայ քաղհանելը ընկնում է խոտհարի և հնձի ժամանակները—երբ բանւորի մէկը աշխատում է օրեկան 1 ր.—1 ր. 50 կ. և երբեմն նոյնիսկ աւելի. որպէսզի այդքան խոշոր ծախսերի փոխարէն աւելի քշով կարելի լինի նոյն աշխատանքները կատարել, և գուցէ դեռ աւելի լաւ՝ պէտք է աշխատել բանւոր ոյժը փոխարինել քաղհան մեքենայով (окучникъ, культиваторъ), (տես նկար 2.) որի համար բաւական է մի ձի և երկու բանւոր: Քաղհան մեքենան մի օրում կարող է 20 և աւելի բանւորի գործ կատարել: Քաղհան մեքենան կարելի է գործածել միայն շարքացան արտերում: Մեքենան ունի քաղհանող թոխներ — ուրագներ, բուկը բողազը լցնող թիակներ և ջրելու համար ակոս գծող խոփ: Մեքենայով քաղհանելու և փխրացնելու գործողութիւնը անհամեմատ թէ արժան է նրստում և թէ արագ է կատարւում:

Ընդհանուր առմամբ հաշւած է, որ մէկ դեսեստինը ձեռքով 3—4 անգամ քաղհանելը,

բողազը լցնելը նստում է 40—60 րուբլի, մինչդեռ մեքենայով նոյնքան անգամ քաղհանելն ու



Նկար 2. Քաղհանող — փխրացնող մեքենայ (культиваторъ):

փխրացնելը նստում է ամենաշատը 20 րուբլի. մօտ 20—40 ր. պակաս, մի գումար, որով հեշ-

տութեամբ կարելի է մի քաղհանիչ մեքենայ առնել:

Որովհետև մեքենան հեշտացնում է քաղհանելու գործողութիւնը, ուստի ցանելիս պիտի արտը շախմատաձև կամ քառակուսի շարքերով ցանել, որպէսզի մեքենան ազատ կարողանայ ամեն կողմից քաղհանել, որով այլևս համարեա թէ կարիք չի լինի ձեռքի աշխատանքով բոյսի շրջապատը կամ արանքները քաղհանել—փխրացնել: Ընդհանրապէս որքան շուտ-շուտ կատարեն քաղհանելու և փխրացնելու գործողութիւնները, այնքան աւելի ապահովւած կարելի է համարել բամբակի առատ բերքը:

11. ՋՐԵԼԸ.

Բամբակը շուր շատ չի սիրում, այլ աւելի տաք արև է սիրում, որի համար էլ ամերիկացիք իրաւամբ բամբակին անւանում են «արեգակի որդի»: Խոնաւ տեղերում, անձրևառատ վայրերում բամբակը առանց ջրելու էլ զարգանում, աճում ու հասունանում է, կամ շատ-շատ մի ջրով արդէն վերջանում է նրան ջրելու խնդիրը: Սակայն այդպէս չէ Անդրկովկասում մեզ մօտ, որտեղ գիւղացիք մինչև այսօր էլ անխնայ ջրում են ու ջրում բամբակը, մտածե-

լով, որ ջրից է կախւած բամբակի շուտ հասնելն ու առատ բերք տալը:

Ընդհանրապէս այն տեղերում, որտեղ անձրևները կամ տեղի խոնաւութեան պատճառով կարելի է եօլա գնալ, բամբակը չի չորանալ յաւ կլիմի ամենեկին ջրել, մանաւանդ ամառայ վերջին Օգոստոս—Սեպտեմբեր ամիսներին, իսկ եթէ տեղը չորային է, սովորաբար պէտք է աշխատել բաւականանալ 3—4 և ամենաշատը 5 անգամ ջրելով, միշտ յիշելով սակայն, որ աւելի լաւ է քիչ ջրել, քան ջրակոխ անել—лучше долить, чѣмъ перепить.

Պէտք է աչքի առաջ ունենալ նաև այն հանգամանքը, որ ջուրը կոշտացնում, պնդացնում և ցրտացնում է հողը, որ հողի երեսին հաստ շերտ—կեղև է գոյանում, ճեղքեր են բացւում, և բացի այդ՝ ջրելուց յետոյ միշտ բամբակի արտը ալաղակոխ է դառնում, ծածկւում է աւելորդ և անպէտք խոտերով ու բոյսերով:

Որոշակի չի կարելի ասել, թէ քանի անգամ և երբ պիտի ջրել բամբակը, այդ կախւած է տեղից, կլիմայից, եղանակներից և մշակման ձևից:

Անձրևառատ և խոնաւ տեղերում համարեա թէ կարիք չկայ և ոչ մի անգամ ջրելու: Գանձակի նահանգում սովորաբար ջրում են 2—3—4 անգամ, Երևանեան նահանգում 4—5—6 և կան

տեղեր, որ 8—10 անգամ պէտք է ասել, որ այդքան ջրելը թէ բամբակին է վնասում, թէ հիւանդութիւններ է առաջացնում, թէ հողն է ուժասպառ անում և թէ արգելք է հանդիսանում յաջող բերք ստանալուն: Բամբակը ոչ այնքան պիտի ջրել, որքան քաղհանել, ալաղը տալ, փրկաբացնել, բողազները բռնացնել: Պէտք է իմանալ, որ երկու անգամ քաղհանել—փխրացնելը հաւասար է երեք անգամ ջրելուն, և զուր չէ, որ ամերիկացիք ասում են. «ծոյլ երկրագործը հաջրում է, իսկ գործունեայ—եռանդուն երկրագործը մշակում—փխրացնում է»:

Սովորաբար տաք կլիմայ ունեցող տեղերում բամբակը—բացի ցանելու ժամանակ ջրելուց—պէտք է ջրել ամառը 2 ամենաշատը 3 անգամ, իսկ վերջին ջուրը պէտք է Օգոստոսի 10—15-ից ուշ երբէք չտալ, որովհետեւ Օգոստոսից յետոյ խոնաւ եղանակները սկսում են, ուրեմն էլ ջրելու կարիք չկայ, եթէ ջրելի, չի կարող ժամանակին բացւել, որով և բերքը պակաս կստացուի:

12. ԳԼՈՒԽՆԵՐԸ ՏԱԼԸ.

Եթէ ուզում ենք, որ բամբակները աւելի շուտ բացւեն և բերքով էլ հարուստ լինեն, պէտք է դիմենք արհեստական միջոցների, որը կայա-

նում է բամբակների գլուխները տալում: Յունիսի 25—30-ը, ամենաուշը, մինչև Յուլիսի 10-ը, պէտք է բամբակների գլուխները տալ, որով նրա բոյ քշելը կանգ է առնում, կողմնակի ճիւղերը սկսում են աւելի ոյժ ստանալ, լաւ զարգանալ և պտղակալել: Այդ միջոցով շատ յաճախ է պատահում, որ լաւ մշակւած արտերում լինում են բոյսեր, որոնք իրենց ճղներով մի մեծ թուփ են ներկայացնում՝ ունենալով իրենց վրայ 100—250 կնգուղներ: Գլուխները պէտք է տալ այն բոյսերի, որոնք բոյ են քշել ոչ պակաս քան $\frac{3}{4}$ արշին և ոչ ուշ քան յուլիսի 1—10-ը, որովհետեւ դրանից յետոյ գլուխները տւածները չեն կարող ժամանակին հասունանալ, որով—յօնքը չինելու տեղ աչքն էլ հանած կլինենք—լաւ բերքի փոխարէն ոչինչ չենք ստանալ:

13. ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԲԺՇԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

Բամբակն ևս ազատ չէ հիւանդութիւններից ու զանազան վնասակար թշնամիներից, որոնք—եթէ միջոցներ ձեռք չառնուեն—կարող են բամբակագործի յոյսերն ու սպասելիքները ի դերեւ հանել:

Բամբակի հիւանդութիւններից ամենատարածւածը և բոլորին յայտնին Անդրկովկասում

«Զոռ» կոչւած հիւանդութիւնն է, որի նշաններն ու բժշկելու միջոցները ահա թէ ինչպէս է նկարագրում Երեւանեան նահանգի պետական ագրոնոմ և Սարգարի այգու կառավարիչ Պ. Կանդուրալեանը:

«Երեւանի նահանգում բամբակը ամեն տարի սաստիկ փնասւում է տեղական ժողովրդի մէջ «Զոռ» կոչւած հիւանդութիւնից: Որոշ տեղերում այդ հիւանդութիւնը ոչնչացնում է բամբակի ամբողջ բերքը:

«Զոռի» առաջին նշանները ընդհանրապէս երևում են բամբակի ծաղկելուց առաջ, թէև երբեմն նրանք երևում են և աւելի շուտ:

Տերևների վերին երեսի վրայ սկսում են երևալ մուգ կարմրագոյն բծեր, իսկ բծերին համապատասխան նոյն տերևների յետին կողմում (տակի երեսին) երևում է փառի ձևով դեղնագոյն սպիտակ նիւթ, որը կամաց-կամաց մեծանում է, տերևները սկսում են կուչ գալ ու չորանալ, որի պատճառով բամբակը դադարում է աճել և շուտով չորանում է:

Այդ հիւանդութիւնը բնորոշող բծերը պատահում են նոյնպէս բամբակի ցողունների և կոկոնների (ղոգանների) վրայ, որոնք դադարում են աճելուց, չորանում են ու թափւում ցած:

Վերոյիշեալ բծերը մանրամասն քննելուց, տերևների յետին կողմում կարելի է նկատել ա-

րագ շարժող, համարեա աննկատելի, դեղնագոյն մանր միջատներ. ծաղկելով տերևները յետին կողմից, այդ միջատները առաջ են քերում «Զոռ» հիւանդութիւնը բնորոշող բծեր, իսկ ծծելով բոյսից նրա հիւթը, միջատները խանգարում են բոյսի կանոնաւոր զարգացումը:

Բժշկելու միջոցները.— Մի շարք փորձեր, որ մենք արեցինք այդ հիւանդութիւնը բժշկելու վերաբերմամբ, կատարելապէս յաջող անցան. նրանք կայանում են հետեւեալում.—

«Զոռ» հիւանդութիւնը բժշկւում է բամբակին ծծումբ (քուլուրդ) փշելով: Առաջին սրբակումը—փշելը հարկաւոր է կատարել հէնց այն ժամանակ, երբ տերևների վրայ սկսում են երևալ առանձին փոքրիկ բծերը: Գուլուրդ փշելը պէտք է կրկնել ամեն անգամ, երբ այդ բծերը կմեծանան կամ թէ կբազմանան: Սովորաբար բաւական է լինում, նայած հիւանդութեան զարգացմանը, երկու—երեք սրսկում, որի ժամանակամիջոցը ճիշտ կերպով որոշել անկարելի է, քանի որ զանազան տեղերում հիւանդութիւնները երևում են ոչ միևնոյն ժամանակ:

Ծծումբ (քուլուրդ) փշելը հարկաւոր է կատարել վաղ առաւօտեան, երբ տերևները ցողից (շաղից) դեռ ևս թաց են, կամ թէ երեկոյեան. փշելը պէտք է վերջացնել մինչև կէսօրեայ շոգը

(ժամը 10—11-ը), որովհետև ծծումբը շոգից կարող է այրել բամբակը:

Փչելու ժամանակ պէտք է աշխատել, որ ծծումբը հաւասար կերպով նստի կամ կպչի տերևների բոլոր մասերի վրայ ընդհանուր շերտով. ցանկալի է, որ դեղը թափվի նաև տերևների յետին



Նկար 3. Տօրպիլ, որովքուքուրդ են փչում:

կողմի վրայ, ուր որ ապրում են բամբակի հիւանդութեան պատճառ եղող միջատները: Եթէ ծծումբը փչելուց յետոյ անմիջապէս անձրև եկաւ, փչելը պէտք է կրկնել նորից:

Ծծումբը փչում են Լադլէզի փուքսերով կամ Տօրպիլ կոչւող մեքենայով (տես նկար 3): Մի խալվար տեղին (2 դեսեատին, չորս բե-

ռան տեղ) հարկաւոր է 8—9 փութ ծծումբի փոշի (СѢРНЫЙ ЦВѢТЪ) երեք անգամ սրսկելու-փչելու, ուրեմն մի դեսեատինին 4—4½ փութ. հաշւելով ծծումբի փութը 2 բութի—մի դեսեատին բամբակարտին փչելը կնստի 8—9 բութի, չհաշւած մշակներն ու մեքենան, որից Տօրպիլը արժի 9 բութի, փութսը՝ 2 բութի»:

«Զոռ» հիւանդութիւնը բժշկելու համար ծծումբի հետ լաւ կլինի խառնել և կանաչ սապոն (Зеленое мыло) ոչ շատ քանակութեամբ, որը ծծումբի հետ միասին շատ ուժեղ աղդում է հիւանդութեան վրայ և արգելք հանդիսանում նրա զարգանալուն և տարածւելուն:

Եւ ամեն մի գիտակից բամբակագործ, եթէ գումար չէ խնայում մէկ կամ մի քանի դեսեատին բամբակ ցանելու և զանազան ծախքերի համար, առաւել ևս պէտք է 8—10 բութի չխնայի «չոռից» և նման այլ հիւանդութիւններից ապահովացնելու իր բամբակի ցանքսերը, որոնք յանկարծ կարող են լիովին զոհ գնալ պատահական այդ հիւանդութիւններին, շնորհիւ մի քանի բութ-լինների խնայողութեան:

Բացի «չոռից» բամբակը վնասւում է նաև մի շարք այլ հիւանդութիւններից, ինչպէս օրինակ «Գորշացաւից», որ նկատւում է տերևների վրայ, «Մետրոկնոգից», որը աւելի վնասւում է կրնգոկներին, և վերջապէս փոքրիկ որդներից, ո-

որոնք բամբակի հէնց առաջին շրջաններում թափւում են բոյսի վրայ և ուտում ոչնչացնում բամբակի տերէները:

Այդ հիւանդութիւնները դեռ ևս ուսումնասիրւում են, և մինչև օրս էլ դեռ վերջնական բուժիչ միջոցներ չեն առաջարկւած դրանց դէմ:

Առհասարակ պէտք է իմանալ, որ բամբակը հիւանդանոցում է շատ ջրելուց, հողի բէզարած լինելուց, տաք քամիներից և իրարից վարակելուց: Ահա այդ հանգամանքներն աչքի առաջ ունենալով, դրականապէս կարելի է ասել, որ հիւանդութիւնների դէմն առնելու ամենաառաջին և ամենալաւ միջոցը բամբակի կանոնաւոր եւ լուրջ մշակութիւնն է:

Բամբակի արտը զանազան անասունների և կենդանիների ռոտակոխ անելուց ազատ պահելու համար լաւ է ցանելուց յետոյ քօլերով—փշերով ամուր ցանկապատել. կան և ուրիշ շատ միջոցներ, բայց թանգ նստելու պատճառով չարժէ դրանց վրայ կանգ առնել:

14. ԾԱՂԿԵԼՆ ՈՒ ՄԻՋԻ ԽՈՏԵՐԸ ՄԱՔՐԵԼԸ:

Յուլիսին բամբակը սկսում է ծաղկել, Օգոստոսից կնգուղակալել: Արտը, երբ որոշ չափով պատած է բամբակի ծաղիկներով, պէտք է այլևս ոտք չկոխել: Այդ ժամանակ արդէն աւելորդ

խոտաբոյսերն էլ անգոր են հանդիսանում բամբակին նեղել, միայն, եթէ արտի մէջ կան խոտեր, որոնք բարձրացել և բամբակի բօյին են հասել, կարելի է զգուշութեամբ մտնել արտն և փոքրիկ մանգաղով քաղել այդ աւելորդ խոտերը, որպէսզի դրանք շուք չանեն բամբակին, մէկ էլ չսերմակալեն ու սերմերը թափեն արտը լցնեն:

Դրանից բացի, Յուլիսի 10—15-ից յետոյ, համարեա թէ արտում այլևս դործ չկայ անելու, բացի վերջին ջրից, որը պէտքէ տալ Օգոստոսի 5-ին, ամենաուշը 15-ին:

15. ԲԱՄԲԱԿԻ ԲԱՅԻԵԼՆ ՈՒ ՀԱՒԱՔԵԼԸ:

Բամբակի կնգուղները հէնց որ հասունանում են, սկսում են ճաքճքել և դրանց միջից կախ են ընկնում ձիւնի չափ սպիտակ և մաքուր հունդաւոր բամբակները:

Բամբակը աւելի շուտ սկսում է բացւել արտի կողքերին—դրադներին, կամ աւելի նոսր և բոյով ցածր տեղերում և ընդհանրապէս բամբակի թիփերի ներքին ճղների վրայ: Բամբակի բացւելը սկսում է Օգոստոսի վերջերից և տեւում է մինչև Հոկտեմբերի վերջը, նոյնիսկ Նոյեմբերի 10—15-ը, նայած եղանակների ցուրտ կամ տաք, արեւային կամ ամպոտ լինելուն:

Թողնել որ արտի բամբակները բոլորն էլ

բացւեն, ապա միայն ձեռնարկել հաւաքելը, միանգամայն անմտութիւն է. աւելի յարմար է այդ 2-3 ամիս տեղը շրջանում բամբակը հաւաքել 3—4—5 անգամում, ի հարկէ նայելով բամբակի բացւածքին:

Առաջին անգամ հաւաքած բամբակը—եթէ անձրևի չի ենթարկւել—պէտք է զատել և առանձին պահել սերմացւի համար, նոյնպէս և երկրորդ բերքը:

Երբ բամբակը նոր-նոր սկսում է բացւել, պէտք է սկսել հաւաքել լաւ բացւած տունը բամբակները—բոյսի միջին կամ ներքին մասերից, որոնց հունդերը ամենալաւ և շուտ հասնող տեսակի սերմացու կարող են դառնալ բամբակագործի համար: Ներքին մասերից ժողովւած բամբակի սերմերը մի առաւելութիւն ևս ունեն, որ ապագայում դրանք աւելի թեւակալող—ճիւղաւորւող բոյսեր են դառնում, քան բոյ քշող:

Բամբակի հետեւեալ բերքերը պէտք է հաւաքել և խառն փոել մի չոր, ոչ խոնաւ էյլանում կամ ամբարում, մինչև որ բամբակը բոլորն էլ հաւաքւի վերջանայ, հաւաքածն էլ լաւ չորանայ:

Բամբակը մի քանի բերքերի կամ տեսակների բաժանելը մի այլ նպատակ ևս ունի. առաջին և երկրորդ բերքերը, որ լինում են սովորաբար շատ մաքուր, չգեղնած համարւում

են առաջին տեսակի բամբակ, իսկ երրորդ և հետեւեալ բերքերը, որոնք կամ անձրևի տակ են մնացած լինում, կամ լիովին հասունացած չեն լինում, որոշ չափով դեղնաւուն են լինում և այլն, համարւում են երկրորդ տեսակի բամբակ, որ սովորաբար ծախւում է առաջին տեսակի կէս արժէքով:


Բամբակը բոլորը հաւաքելուց յետոյ չպէտք է կուտակել իրար վրայ, որովհետև այդպիսի կուտակումից բամբակը նախ՝ տաքանում է, որով և փչանում է նրա լաւ յատկութիւնը, դոյնը փոխում է, սերմերը թորշոմում են, և երկրորդ, որ հաւաքած բամբակը դեռ խոնաւ է լինում, ոչ բոլորովին չոր, կուտակւած դրութեամբ էլ ամենեին չի չորանում:

Դրա համար էլ բամբակը պէտք է փոել լաւ չորացնել: Դեղնաւուն բամբակը, եթէ աշնանը փոենք արևի տակ չորացնելու՝ մի փոքր կլաւանայ, այսինքն կսպիտականայ և գեղեցիկ դոյն կստանայ:

16. ԲԱՄԲԱԿԸ ՀՈՒՆԴԻՑ ՄԱԲՐԵԼԸ.

Հունդով բամբակը լաւ չորացնելուց յետոյ պէտք է «ջին» մեքենայով (տես նկար 4) (բամբակ մաքրող մեքենայ) զտել սերմից, եթէ բամբակը չոր է, մեքենան լաւ գործում է, սերմի-

ըը համեմատաբար մաքուր են թափւում. իսկ եթէ բամբակը թաց է, մեքենան շատ դժւար է բանում, սերմերի վրայ շատ բամբակ է մնում,



Նկար 4. Ձին—բամբակը հունդից մաքրող մեքենայ (փոքր տեսակը):

բացի այդ մեքենայի սղոցները լողողում են—բռնում են բամբակի թելիկներով, որով և գործն էլ ուշանում է:

Շատերը մտածելով, որ բամբակը եթէ մի քիչ թաց մաքրելու լինեն, ծախելիս բաւականին ծանր կգայ՝ չեն մտածում, որ այդ ծանրութիւնից աւելի բամբակ է մնում թէ՛ սերմերի և թէ՛ սղոցների վրայ:

Ձին մեքենաները լինում են 18—80 սղոցանիներ, արժողութեամբ 150 բուբուլց սկսած և աւելի: Մեքենան մի օրում մաքրում է 20 և աւելի փութ մաքուր բամբակ, նայած թէ ինչ մեքենայ է, քանի՞ սղոցանի և ի՞նչ ոյժով է բանում, ջրի, շոգու և այլն:

Մեքենատէրերը ուրիշների բամբակները մաքրելիս իբրև վարձ—շահդ վերցնում են 30—40 փութ մաքուր բամբակից մի փութ բամբակ: Բամբակը մաքրելուց յետոյ մաքուր բամբակը պէտք է ծախել, հունդը—սերմը պահել, լաւը՝ սերմացւի համար, իսկ մնացածը իբրև առատուհանների կերակուր:

17. ՍԵՐՄԵՐԸ ԻՐԻՔԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿԵՐ ԵՒ ՊԱՐԱՐՏԱՆԻԹ.

Գիւղացիները կամ բամբակագործները երբեք չպէտք է բամբակը առանց մաքրելու ծախեն, որովհետև բամբակի հունդը բամբակագործի համար նոյնքան աւելի թանկ պիտի արժենայ, որքան և մաքուր բամբակը:

Հունդը, բացի սերմացւի համար պէտք դա-
լուց, համարուում է և մի անփոխարինելի կերա-
կուր անասունների համար: Եթէ օրեկան 3—4
ֆունտ հունդ արւի կթւող կովերին, վերջիններս
նկատելի չափերով կաւելացնեն կաթի քանա-
կութիւնը: Հունդը թէ չաղացնում է անասուն-
ներին և թէ ոյժի է բերում—զօրացնում է:

Մորթելու համար պահւած անասուններին
մորթելուց 10—15 օր առաջ պէտք է դադարել
հունդ տալուց, որովհետեւ հունդը մսին՝ ինչ-
պէս և մեծ քանակութեամբ ուտող կովի կաթին
—մի տեսակ դառնաւուն համ է տալիս:

Հունդից իւղ էլ են պատրաստում (хлопко-
вое масло), որի փութը ծախւում է 3 ռ. 50 կ.
—5 ռ. և աւելի. իսկ քիւսպը դարձեալ գործ են
ածում անասուններին կերակրելու համար: Հուն-
դը իւր մէջ պարունակում է ֆօսֆօրային թրթ-
ւում և ազօտ, դրա համար էլ աւելի ձեռնառու
է հունդը նախ գործ ածել իւրեւ կերակուր ա-
նասունների և ապա վերջիններից ստացած աղ-
բը, իբրեւ պարարտանիւթ, արտերը պարարտաց-
նելու, որով բաւականին ուժասպառ եղած
արտերից ստացածը դարձեալ որոշ չափով յետ
ենք դարձնում հողին:

Այդպէս են վարւում բոլոր քաղաքակիրթ,
հողը և գործը սիրող երկրներում, իսկ մենք,
ընդհակառակը մեր տնային, համարեա թէ ձրի

ձեռք բերւած հարստութիւնը վաճառում ենք
գործարանատէրերին և զբոսեցիներին, իսկ մեր ա-
նասունները մատնում քաղցածութեան, մեր
դաշտերը քայքայման, որով թէ ապագայ բերքն
ենք նւագացնում, թէ սերմերը թանգացնում և
թէ մեր անտեսութիւնը քայքայման ենթար-
կում:

18. ՀՈՂԻ ՈՒԺԻՅ ԸՆԿՆԵԼԸ.

Բամբակի արտը իր միջի բոլոր սննդարար
նիւթերը մատակարարելով բամբակի բոյսին և
նրա զարգացմանն ու աճեցողութեանը, պարզ
է, որ արդէն ուժասպառ է լինում և անգոր իր
վրայ նորից բուսցնելու և աճեցնելու բամբակ
կամ նոյնանման մի այլ բոյս ան թափով և
չափով, ինչպէս որ աճեցրել էր բամբակին:

Հողի ուժից ընկնելը մեծ չափերով նւա-
ղացնում է առաջիկայ մշակելիք բոյսի բերքը,
և եթէ մի քանի տարի անընդհատ հողը ցան-
ւում է, առանց բաւարար չափերով պարար-
տացնւելու—մի քանի տարուց յետոյ այդ հողը
անպէտքանում է, որի պատճառով և գիւղացի
աշխատաւորները ոյժ են տալիս ջրին, առանց
մտածելու, որ հէնց ջուրը ինքն էլ ամենից շատ
է ուժից գցում հողը:

19. ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄՆ.

Ուժից ընկած, քայքայւած հողերի պարարտացման մասին արդէն խօսել ենք սկզբի գլխներում. այստեղ միայն աւելորդ չենք համարում, նորից յիշեցնել, որ այդպիսի ուժասպառ հողերին անհրաժեշտ է ոյժ տալ, պարարտացնել:

Պարարտացման միջոցներն ու նիւթերը շատ շատ են, բայց ամենազիւրիւնը և ամենաարժանը գոմի և աղբանոցի աղբն է, որքան կարելի է հինը, տան զիբիլը, մոխիրը և այն ամեն աւելունքները, ինչ որ իբրեւ անպէտքութիւն և կեղտ դուրս ենք ածում տանից, գոմից, հաւանոցից, ամբարից և այլն:

20. ՓՈԽԱՐԻՆՈՂ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ.

Մի կտոր հող, եթէ մի տարի բամբակի տակ է դրւում, անհրաժեշտ է, որ հետեւեալ տարին նա փոխարինուի ուրիշ բոյսի մշակութեամբ և ոչ բամբակի, որով հողը թէ հանգրտանում է, թէ նորից այլ և այլ սննդարար նիւթերով հարստանում է և թէ ոյժի է զալիս:

Բամբակի արտը կարելի է դնել բոստանի, հացահատիկների և նման մշակութիւնների տակ. իսկ բամբակ ցանել այն հողերի վրայ, որոնք

եղել են բոստանի խոտաբոյսերի, բանջարանոցների տակ:

Ահա այդպիսի փոխարինող մշակութիւնների թակայ հողերից միայն կարելի է բամբակի առատ բերք սպասել:

21. ԲԱՄԲԱԿԻ ԾԱԽՔՆ ՈՒ ԱՐԴԻՒՆԲԸ.

Կովկասում ջրովի տեղերում կանոնաւոր մշակւած մի դեպքատին տարածութեամբ բամբակի վրայ արւած ծախքերը հետեւեալ պատկերն են ներկայացնում, ըստ բամբակաբուծութեան մասնագէտ Ն. Պ. Տարատինովի (Н. П. Таратыновъ).

բուրի

- | | |
|--|---------|
| 1. Աշնանավարը գութանով | 10—15 |
| 2. Հողը պարարտացնելը աղբով, մոխրով, կրով և այլն. | 8 — 10 |
| 3. Գարնանավարը չութով | 5 — 6 |
| 4. Ցանելուց առաջ ցաքանելը | 2 — 3 |
| 5. Ցանքսը շարքացանով կամ ձեռքով | 5 — 8 |
| 6. Առունքը պատրաստ. ջր. համար | 2 — 3 |
| 7. Նոսրացնել-սէյրագացնելը | 8 — 12 |
| 8. 3—4 անգամ ջրելը | 3 — 4 |
| 9. Քաղհանելը ուրագ-թոխներով | 24 — 40 |
| 10. Փխրացնելը | 6 — 12 |

11. Գլուխները տալը 2 — 3
 12. Բամբակը հաւաքել (50—80 փ.) 20—32
 13. Բամբակը ջինով մաքրելը 5 — 7
 14. Բամբակը արտից տուն տանելը 3 — 5
 15. Հողի արեւդը 20—40

124—200

Կամ կտրակ թւով 125—200 բուբլի ծախք մի դեսեատինի վրայ:

Միջին հաշւով մի դեսեատինը կարող է տալ 50—80 փութ չմաքրած բամբակ, որ եթէ հաշւելու լինենք 3 բ. 50 կ. կատանանք 175—280 բ. յաջող տարիներին դեսեատինը կարող է տա 25—30 և աւելի փութ մաքուր բամբակ, այն ժամանակ զուտ արդիւնք կարելի է սպասել մի դեսեատինից 2—300 բուբլի և նոյնիսկ աւելի»:

Պէտք է ասել, որ բամբակի բերքը կախած է տարւայ եղանակներից, հողից և որ զլխաւորն է մշակութիւնից: Չպէտք է մոռանալ նաև, որ անյաջող տարիներին մարդիկ ծախքերն անգամ չեն կարողանում ծածկել: Մեր համեստ կարծիքով պէտք է քիչ տարածութեամբ բամբակ ցանել, միայն լաւ մշակել, որ աւելի շատ արդիւնք կտայ, քան մեծ տարածութեամբ ցանել և վատ մշակելը:

Այս գրքոյկը կազմելիս ղեկավարւել ենք մեր ունեցած գործնական պարապմունքներով և նրանց տւած հետեւանքներով. այդ ու ամենայնիւ աչքաթող չենք արել նաև զանազան գրւածքներ բամբակագործութեան վերաբերեալ, մանաւանդ 30 տարւայ գործնական և գիտական փորձառու. թիւն ունեցող յայտնի բամբակագործ ազրոնոմ Ն. Պ. Տարատինովի աշխատութիւններն ու յօդւածները և երկրագործ-ազրոնոմ Ա. Աթանասեանի «Բամբակը և նրա մշակութիւնը» ընդարձակ և խնամքով կազմած ձեռնարկը:


Վ Ե Ր Զ



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՈՒՆ

Ի. Գ.

ԿԵՍՍԵՐ



Тифлисъ, Михайловскій просп. № 167.

ՊԱՀԵՍՏ Բամբակագործության վերաբերեալ մեքենաների և գործիքների. — Գուլթաններ, Շարքայաններ, Բաղհանիչներ, բամբակ մաքրող Ձիւներ «Պրէտտ» և «Օրեօլ» սխտեմի-ամերիկական «ԿԱՐՎԵՐ» գործարանի:

Նէֆտամատորներ՝ «ԳՕՐՆՍԻԻ» և շոգեշարժ գուլթաններ «ԱՅԻՎԵԼ» Անգլիական գործարանների: Մարսելեան թարմ ծծմբափոշի (քուքուրդ) բամբակի և խաղողի բժշկութեան համար Leonce Vezian մարկայի:

Սարքում է. — Բամբակ մաքրող գործարաններ, Ջրմուղ, Ոռոգիչ և Էլէքտրական կայարաններ:

Մատչելի արժէքներ և նպաստաւոր պայմաններ.

Արծաթեայ մեծ մեդալ



Թիֆլ. 1909 թ.



Ոսկէ մեդալ



Րօստով-Դոն 1909 թ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՌԱՋԻՆ
ԷԼԵԿՏՐՕ-ՄԵԿԵՆԱՅՆԱԿԱՆ ՄԵԳԻԱՆՈՒԺԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

ԱԴՈՒՓ ԴԻԻՄԱՅԻ


Тифлисъ, Михайловскій просп. № 140

ՓԵԹԱԿՆԵՐ ԵՒ ՓԵԹԱԿԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ
Մեղրամոմ և Արհեստական Մոմաթերթ
Մեղաբուծական գործիքներ, ցենտրաֆուգ, մոմահալ, գլանաձև մեքենայ և այլն.


ՄԵՂՈՒՆԵՐԻ, ՄԱՅՐԵՐԻ ՊԱՀԵՄՏ.
ՔԱՄԱԾ ՄԵՂՐ ԵՒ ՄԵՂՐԱՀԱՅ.

ԴՐՔԵՐ ԵՒ ՉԵՌՆԱՐԿՆԵՐ.

Պատկերազարդ պրէյսկուրանտներն ուղարկում են ձրի.




«ԱԿՍԱՅ» ԸՆԿ. ԳՈՐԾԱՐԱՆԻ



ЗАВОДЪ ЗЕМЛЕДЕЛЬЧЕСКИХЪ
МАШИНЪ И ОРУДІЙ

АКЦИОНЕРНАГО
ОБЩЕСТВА
«АХАЯНЪ»

Գործարաններ և հնձող մեքենաներ, ամուր, դիմապիտուկ և մառիկի
արժեքներով: Մըրում են եւրոպական յայտնի գործարանների հետ:



Դիմումներն ուղղել Անդրկովկասի լիազոր Պերճ
Գալֆէճեանին

Тифлисъ, Реутовская ул. № 29 уполномочен-
ному Закавказья Акц. О-ва. «Ахсай»

Перчь Н. Кайфаджянцу.



ԶԵՐԱՄԻ ՍԵՐՄ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ Ա. ՎԱՐՊԵՏԵԱՆՆ ԵՒ ԸՆԿ.

ՅԱՅՏՆԻ ՖԻՐՄԱՅԻ

Առաջարկում է ամենաընտիր տեսակի բաղդա-
ղի կոչւած ցելուկեար սերմ, տուփը 6 մսխալ:
Դիմել՝ Կովկասի, թուրքստանի և
Պարսկաստանի միակ ներկայացուցիչ
ՏԻԳՐԱՆ ԽԱՉԻԱՆՑԻՆ

Тифлисъ, Сіонская ул. Соборный ту-
пикъ, д. Бархударова

Тиграну Хачіянцу.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ

ՀՀ Ազգային գրադարան



NL0287568

«ԳԻՒԳԱՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆԸ»

Շուտով լոյս են տեսնելու՝

1. ԳԵՏՆԱԽՆՁՈՐԸ (Картофель) պատ-
կերներով.
2. ԻՆՉՊԷՍ ՊԱՀԵԼ ՂԵՐԱՄԸ պատ-
կերներով.

ՊԱՀԵՍՏԸ՝ «Գիւղատնտես»-ի խմբագրատանը: